

ԽԱՍԻՍ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎԻՔ ԱՐՄԷՆ

55ԴՊ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 34

18 ՕԳՈՍՏՈՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Մաղբանգ Վեն. Կայսեր

Յուդայի Համբոյր

Մոլորումբ

Միայն ՄԵՆԳ Մոլեռանդ ենք

Կեղծիք Առուեսիմ մէջ.

Դանգաս

Դինով Սէր

Սիրոյ Զայներ

Հսպիքը

[Պատմութեամբ Կամօն Փիլոսոֆի]

Ի՞նչ տը Երբայական Փիլիսոփայութեան

Պատմութեան

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՏՕՄԻՆՈ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՍԵԱՆ

ՌՈՒԲԷՆ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՆՇԱՆԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԵԱՆ

1907

THE

LIBRARY

OF THE

UNIVERSITY OF

CHICAGO

1890

1890

1890

1890

1890

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆւլ-ֆախան. —

Բաժանորդագրութիւն Կ. Պոլսոյ համար 8) զրշ. , գաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր. : Զեռքէ վաճառում՝ ծաւը փարա: Հաղցէ՝ Ղալաթիա, Քամանոս փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մասնաւորին մէջ, օր աւուր աւելի՝ հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխներու շնորհիւ, զորս ներուժած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԼՏԿԵԼՊԱՋԱՐԻ ՐԱՄԱՆ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւարանական և այլն, բացի զրական, բանասիրական գրութիւններէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէտպիսութիւն մը կը կազմեն:

Եղիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ գեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրաւաճառ Զարեհ Էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գարու, Բասըմ Բաշա Խան) որուն կրնան գիտել Բառարանին՝ (զինը 15 զրշ. փօթի ծախքով 1/2) ինչպէս գրեական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամբա գրաւաճառի մը հետ գործունենալու վստահութեամբ. — Իր հրատարակութիւնն է նաև Դպրոցի Դիրքը դասագիրքերու շարքը, որ միակն է կանոնաւոր մէթոտով մը ընթացող՝ նախալրթական դասընթացքի շրջանին համաձայն:

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆ՝ զրած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան մասնաւորապէս ծնողքներու և դաստիարակներու համար, որոնք կը փափաքին գիտնալ թէ ինչպէս կարելի է օգտակարապէս խօսիլ մանչերու, իրենց տարիքին յատուկ եղող մոլութեան վրայ և անկէ զգուշացնել զանոնք: Կատարեալ ղեզազիր մըն է այս գրքոյկը՝ զիջութեան դէմ: Դինը 5 զրուշ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ՝ կը խօսի մանչերու յատուկ մոլութեան վրայ բո՛ւն իսկ մանչերուն, որպէս զի անոր ընտելութիւնը և վտանգաւորութիւնը հասկնան նոյն իսկ իրենք ու կամովին հրաժարին անկէ: Անգլիացի ընթերցողներէ ա՛յնքան համակրութիւն վայելող այս գրքոյկը հայերէնի թարգմանած է Տօքթ. Յովս. Տ. Ստեփանեան հայ պատանիներու ծառայութիւն մը մատուցանելու համար: Բացարձակապէս վստահելի ու անօրինակ կերպով ա՛ժան լոյ 40 փարս — որպէս զի մատչելի ըլլայ ամէն մանչու: Կեդրոնատեղին՝ Պալենց Գրատուն, Կ. Պոլիս:

Մեր նախորդ թիւի Միտքի Զրօսանքը ճիշդ լուծող չէ գտնուած դեռև Պոլիսէն: Ոմանք լուծել կարճած են զայն՝ մէջի գիծերուն վրայէն անցնելով, կամ քառակուսի չրջանակէն դուրս ելլելով: Հետեւաբար այս Միտքի Զրօսանքը, որ մեծ հետաքրքրութիւն առթած է ընթերցողներուն, կը ներկայացնենք նաև գաւառացի ընթերցողներու, հետեւեալ պայմանով: Յրանսական գիտական թերթ մըն է որ առաջարկած է այս Միտքի Զրօսանքը, 200 ֆրանքի պարգև մը խոստանալով: Արդ, նպաստաւորելու համար մեր մրցողները այս առիթն է, կը ստանձնենք ճիշդ լուծողին արդիւնքը հաղորդել այդ թերթին, պարգևը իրեն սեփականելու առաջադրութեա՛հ: Մինչև հոկտ. 15 (Ե.) պայմանաժամ տուած է թերթը. հետեւաբար մինչև եւրոպական սեպտ.ի վերջը ճիշդ լուծումը մեզի հասցնողին լուծումը կը ստանձնենք անմիջապէս հաղորդել ֆրանսերէն թերթին: Երբ իրեն վիճակի պարգևը, լուծողը կը ստանայ զայն իր անունովը՝ իր հայգէին, մեր կողմէ ալ ստանալով մեր ժամացոյցի պարգևը: Այսպէս, հանելուկին լուծումն ալ պիտի հրատարակենք Մրցումին արդիւնքին հետ: Մրցումին կրնան մասնակցիլ Պոլիսի ընթերցողներն ալ: Պատասխանները կ'ընդունուին միայն Մասիսի կողքին վրայ: Աւելցնենք թէ՛ մեզի ծանօթ է լուծումը: Կր կրկնենք առաջարկը. —

Հետեւեալ քառակուսիին ո՛ր և է մէկ անկիւնի խորշիկէն մեկնե-
լով, պէտք է անցնիլ խառքանշուր խորշիկէն և դիմացի (օրինակի հա-
մար Ա. անկիւնէն մեկընդո՛ւլ՝ պէտք է միւս Ա. ա՛յկիւնէն գուրս ելլել)
անկիւնէն գուրս ելլել, առանց անգամ մը մտած խորշիկին մեջ մտնե-
լու, առանց մեջի անկիւններէն անցնելու, առանց փռակուսի շրջանա-
կէն դուրս ելլելու կամ գիծերուն վրայէն անցնելու և առանց ո՛ր եւ է
մէկ հասք բացը ձգելու:

2

U.

A blank sheet of graph paper with a grid pattern. The grid consists of 10 columns and 8 rows of squares. A diagonal line runs from the top-left corner to the bottom-right corner, passing through the center of the grid. There are also some faint horizontal lines across the grid, possibly indicating different sections or margins.

U



ՏԱՐԵԴԱՐՁ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՅԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ, ՄԵՇԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԳԻՈՅ

Օսմանեան մեծածառալ կայսրութեան ամէն կողմը, վաղը արտասու-
վոր խրախճանքով կը տօնուի Գահակալութեան բարեբաստիկ Տարե-
դարձը՝ Վեհ. Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ Բ. Կայսեր և օսմանեան մի-
լիօնաւոր հպատակներ սրտաբուխ մաղթանքներով կը փառաւորեն այս
թուականը: Ն. Վեհ. Օգոստոսիաւ Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ Բ. Կայ-
սեր Օսմ. Գահը բարձրանալը երջանկարեր թուական մը եղած է Օսմ.
Կայսրութեան համար, որովհետեւ Նորին Վեհափառութեան գահակալու-
թեամբ Թուրքիա մտած է զարգացման և բարգաւաճման նոր շրջանի մը

մէջ, իր զինուորական յառաջդիմութիւնովը, տնտեսական բարգաւաճ վիճակովը, ճարտարարուեստներու զարգացումով, և այն բաղմաթիւ յառաջդիմական գործերով, որոնք իրականացած են Ն. Վեհափառութեան բարեհաճ հեղինակութեամբ: Օսմ. Կայսրութեան վայելած այս բարիքները՝ երկրին միլիոնաւոր ժողովուրդին սիրտը կը լեցնեն երախտագիտական զգացումներով, որոնք իրենց արտաբուխ մաղթանքները կը բարձրացնեն յօտս Ն. Կայս. Վեհափառութեան: Մասին ձայնակցելով բովանդակ մամուլին կողմէ՝ արտայայտուած խնդակցութեանց ու մաղթանքներուն, կը գոչէ.

Կեցցէ՛, յաւերժ կեցցէ

ԹՈՒՐԻՒՈՅ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԻՆՔՆԱԿԱԼԸ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆԸ ՂԱԶԻ



ՄԱՍԻՍ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԲԴ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 34

18 ՕԳՈՍՏՈՍ 1907

ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԲՈՅՐԸ

Անոր համբոյրը չունէր
Սխալի մը մեղով շոշափը,
Որ հըծծումով մը՝ սիրոյն
Կը շըշընջէ սուսափը:

Անոր համբոյրը չունէր
Բոյրի մը մեղի այն քափը,
Որ շուրթերու օրօրին
Հեռ կը խառնէ իր մրափը:

Անոր համբոյրը չունէր
Խաւնդի մը խիւնդն ու ծափը,
Որ սիրտերու օրօրումին
Հեռ կը քընդէ իր քափը:

Անոր համբոյրը չունէր
Շողի մը քորք շառափը,
Որ քիթերէն կը քափէ
Հայրամներու օտաւափը:

..

Անոր համբոյրը փըշեց
Խորշակի մը խառշափը,
Փոթորկելով ոսկեփունջ
Երազներու քօրափը:

Անոր համարոյրը լորձնեց
 Ժահրի մը տենդն ու շափը,
 Սուրբ երակե սողկելով
 Սե՛ւ խոկումի սարսափը:

Անոր համարոյրը կըրձնեց
 Հեռ ու անկգի կափկափը,
 Ու խառանի մեկը դրոշմով
 Ճակցի մը չիմջ սասափը:

Ո՛վ պիղծ համարոյր, որ գըրգռեց
 Ըստուհեմետու կըլափը . . .
 Լոյսիւն շնդհեմգ գըրկելով
 Մոլուցքի խեղդն ու խափը,
 Մըջագիշե՛ր խառխափը:

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԴՈՒՐԵԱՆ

ՍՈՒՈՐՈՒՄԸ

Դ.

Երբ կը դիտեմ շուրջս գտնուող հեղիկ և համակերպող կիները, երբ կ'անդրադառնամ անոնց ոչխարային հնազանդութեան, կը խորհիմ ինքնիրենս թէ՛ ես գէշ նկարագիր ունենալու եմ. ա՛յնքան ինքզինքս տարբեր կը զգամ անոնցմէ: Իրաւամբ, երբեք համակերպութեան առաքինութիւնը չեմ ունեցած. ֆիզիքական և բարոյական ցաւերուն դէմ առաջին շարժումս ըմբոստացումն է: Ա՛հ, չեմ ուզեր տառապիլ, չեմ ուզեր ցաւիլ այն տեսակ ուժգնութիւնով մը՝ որ կը կարծեմ թէ իրաւունք ունիմ երջանկութեան:

— Բու անընտել նկարագիրդ, կ'ըսէր օր մը Վահէ, միշտ պատի պէս պիտի բարձրանայ քու ճամբուդ դիմացը և որուն ի զուր ճակատդ պիտի դարնես . . .

Ասիկա ճշմարիտ է: Բայց ամէն հաշիւ ընելով՝ գոհ եմ այսպէս ըլլալու: Երբ աչքերս կը դարձնեմ համակերպողներու սին և ստորնացնող երջանկութեան վրայ, միշտ կը նախընտրեմ իմ անընտել նկարագիրս, ինչպէս դէմս բարձրացող պատը և վիրաւորուած ճակատս: Ահաւասիկ կեանքը ըմբռնելու ձեւ մը՝ որ շատ հետեւող պիտի չունենայ ապահովարար: Ասոր համար է թերեւս որ ամենախուռն բազմութեան մէջ ալ՝ ինքզինքս մինակ կը զգամ, հոգիս գոցուած և անհաղորդ ուրիշներուն հետ . . . Մինչեւ հիմա դեռ միմիայն Վահէն կրցած էր ընտանեցնել զիս

ու սանձել իմ խիզախ նկարագիրս: Բայց Վահէ հեռու է ալ և բոլորովին օտարացած ինձմէ, Վահէ... ա՛հ, պէտք է մոռնալ զինքը:

*
*
*

Պէտք է Արամը տեղեկացնել իմ իր մասին ունեցած վարմունքիս պատճառներուն... Ասիկա անհրաժեշտութիւն մըն է՝ որովհետեւ երբ պաղարիւնով կը խորհիմ անցած դարձածին, իր ինծի նկատած Լամբ ունեցած խորունկ զգացումին, կը մտածեմ թէ անարժան դեր մըն է իմ կատարածս:

Եթէ ինքը գիտնա՛ր, թէ ինչո՞ւ երկար ատեն երեսն ի վեր կը նայիմ, որսալու համար այն ճառագայթը, որ իր սև և երկայն աչքերը կը լուսաւորէ և որուն շողիւնը, ա՛հ, այնքան նման է Վահէին նայուածքին: Ինքը չտարակուսիր բնականաբար որ՝ իր վրայ Վահէն է որ կը փնտռեմ, սիրելի և անգութ Վահէն, որուն պէտքը կը գգամ, որուն ներկայութեան տիրական պէտքը կը գգամ իմ ամբողջ էութիւնովս:

Արամին մեկնելէն ետքը ժամերով կը մնամ անշարժ, աչքերս սեւեւ ու խորհելով իրեն և հաշուելով բոլոր վայելքները զոր եղբորը միջոցաւ ունեցած եմ: Ասիկա կեղծ և տաժանելի կեանք մըն է. երազանքներս վրդովուած են երկու եղբայրներուն փոխն ի փոխ ներկայութեամբ: Արամին պատկերը երբեմն ուժգնակի կ'անցնի աչքերուս առաջը ուր ուռաճուող Վահէին պատկերին վրայէն. և ինքզինքս թոյլ ու վատ կը զգամ որչա՞մ մը առնելու համար, անկարող քաջութեամբ դիմադրաւելու ամէն վտանգի և որոշապէս եզրակացութեան մը հասնելու:

Մտածեցի ատեն մը չերեւալ Արամին և այդպէսով իրեն զգացնել թէ կը սխալի, եթէ յոյսեր դրած է իմ զգացումներուս վրայ: Բայց դորձադրութեան պահուն ինքզինքս անկարող զգացի այդ քանին: Արամին ներկայութիւնը անհրաժեշտ դարձած է ինծի, ցաւս թմրեցնելու և նոյն իսկ ամոքելու համար: Երբեմն սարսափով կը խորհիմ այն հաւանականութեան՝ որով Արամ կրնայ հեռանալ ինձմէ որ և է պատճառով. ամբողջ կեանքս կառչած է այն մէկ քանի վաղանցուկ և տարտամ նմանունութիւններուն՝ որոնց միջոցաւ կը հանդարտեցնեմ միւսին կարօտը, անդիմադրելի և հզօր պէտքը սիրելու...

Ա՛հ, երբեմն ամբողջ հոգիս կը գալարուի ամուլ և անտեսուած անցած ըլլալու ցաւովը. չուրջս կը տեսնեմ դեռ երէկուան տղաքները՝ որ կը մեծնան ու մայր կ'ըլլան, մինչ իմ կողերս ի զուր կը դղրդուին բեղմնաւորուելու և ստեղծելու տենչանքովը: Ի՛նչ ուժգին սէր մը պիտի ունենայի իմ պղտիկներուս համար, ի՛նչ մատակ առիւծի յանդգնութիւն ու քաջութիւն: Ասիկա կը զգամ այն վայրենի և հզօր ցաւէն՝ որով կուլամ բոլոր այն տղաքները՝ զորս կրնայի ծնած ըլլալ և զորս կորուսած եմ անդառնալիորէն:

Ասիկա տարօրինակ և ցաւազին զգայնութիւն մըն է որ անհասկնալի թուի թերեւս շատ մը աղջիկներու : Չեմ գիտեր ինչո՞ւ, քանի տարիքս կը յառաջանայ՝ ա՛յնքան այդ ցաւը ուժգնօրէն կը բաբախէ զիս և կը կատարիմ ինքզինքիս դէմ, իմ անպարդիւն և ամուլ կեանքիս դէմ...

Հոգեկան այս տրամադրութիւններուն մէջ ընականաբար քաջութիւնը չունիմ ինձմէ հեռացնելու միակ անձը՝ որ դեռ ինծի կը յիշեցնէ թէ երիտասարդ եմ, թէ դեռ կարելի է սիրել զիս : Արամ զիս կը սիրէ. ասիկա բացորոշ է ինծի համար. ամբողջ աշխարհ կրնայ չանդարաւորնալ ատոր, բայց ես առջի վայրկեանէն զգացած եմ զա՛յն շատ մը պղտիկ և ըստ ինքեան չնչին բաներէ, զորս թուելը և նոյն իսկ սահմանելը դժուար պիտի ըլլար : Ասիկա բան մըն է որ չապացուցուի՝ բայց կը զգացուի. արդէն կին մը երբեք չսխալիր այդ մասին : Բայց այս գաղափարը զիս կը չփոթեցնէ. Արամ զիս խորապէս կը վրդէվէ և տարտամ տխրութիւն մը կը պատճառէ, որով ողորուած կը շարժուիմ երկար ատեն :

*
*
*

Իր աչքերուն խորը, իր թաւշեայ և սեւ աչքերուն խորը նշմարեցի այն հզօր հրայրքը՝ որ անօրինակ ճառադայթ մը կուտար նայուածքին, անսահմանելի լոյս մը, դողդոջուն բայց յամառ, աղամանդի մը պէս պսպղուն. և այդ երկու աղամանդի շողիւնները դամուած են հոգիիս մէջ և որոնց միակ մտածումը զիս կը վրդէվէ յուզմունքի և խռովքի անվերջ սարսուռի մը մէջ :

Մեկնելու ատենն էր. իրեն հետեւեցայ մինչև պարտէզ. հետզհետէ սկած էր մթննալ և քանի մութը կը յառաջանար՝ ա՛յնքան նոր բացուող ճերմակ լիւաները աղւոր կը բուրէին և չահպրկները կը տատանէին, իրենց բարկ և ամօքող հոտը սփռելով մթնոլորտին մէջ : Օդը թանձր էր, կարծես բեռնաւորուած տատանող հոտաւէտ մասնիկներէն՝ որոնց համը կը զգայի շրթունքներուս վրայ : Հեշտագին զգայնութիւն մը կը վերացնէր զիս, կարծես կը բարձրանայի հողէն. գաղջ և խոնավ հով մը ծանրօրէն կ'անցնէր և փայփայանքի մը պէս կը դանդաղէր ճակտիս և մաղերուս վրայ : Թիթեռնիկներ յոգնած և սպառած՝ իրենց թռիչքը ընդհատելով՝ կ'իյնային գետին : Օդին մէջ փոթորիկ կար. հեռուէն հորիզոնին վրայ կարմիր գիծ մը կը բոցավառէր վերջալոյսի ճաճանչներով : Ի՛նչպէս քաղցր պիտի ըլլար այս պահուն՝ գլուխը հանգչեցնել սիրելի կուրծքի մը վրայ, սիրոյ և համակրութեան անսահման վստահութեամբ մը...

Յամբօրէն զգացի որ արիւնս կը տաքնար երակներուս մէջ : Աւելի բարկ և աւելի հեշտագին՝ լիւաներու բուրմունքը օդին մէջ կը ծածանէր այն տեսակ ուժնութեամբ մը՝ որ կարծես չօչափելի պիտի դառնար : Կռնակս ի վար թեթեւ սարսուռներ կ'իջնէին զիս ցնցելով. ի՛նչպէս, չեմ գիտեր, ձեռքս դրի իր ուսին. ինծի այնպէս թեւեցաւ թէ՛ պիտի իյնամ :

գլխու պտոյտ կը զգայի և ժիւնոյն ատեն անբացատրելի, անսահմանելի անձկութիւն մը... Աչքերս տակու առ տակաւ բացուեցան սարսափէ... ուրկէ՞ կը վախնայի, Աստուածս, ինքնիրմէս... Թէ զիս չըջապատող ջղադրգիւ և հեշտագին մթնոլորտէն: Կը զգայի որ՝ չգիրտի դիմագրաւէի ալ, թէ հպատուութիւնս, ցաւս, յիշատակներս ու ամէն բան, պիտի սահէին ու երթային կորսուէին, ինչպէս իմ ոտքերս սկսած էին սահել խառն և անբացատրելի զգացումներու ամբողջութեան մը սահանքին վրայ: Կարելի է ըսել թէ վայրկեան մը ինքզինքս կորսնցուցի: Արամ չատ մը բաներ կ'ըսէր ինծի՝ որոնց չէի կրնար պատասխանել և անաւասիկ անդրադարձայ որ՝ այդ պահուն ատելութիւն կը զգայի իրեն համար, չեմ գիտեր ինչո՞ւ և ինչպէ՞ս: Այլ սակայն մտքէս կը խորհէի. «անհաւատալի է աս... ճշմարտիւ անհաւատալի...». իմ ամբողջ էութիւնովս կը խրտչէի իրմէ, կ'ուզէի հեռանալ և մեկնել, երբ անիկա իմ ձեռքս կը բռնէր պինդ և աչքերուս կը նայէր խորունկ և մխրճող նայուածքով մը, մինչև որ սանձուած ու անկարող, աչքերս կէս մը կը գոցէի այդ երկու պսպղուն աղամանդներուն շողիւնէն կուրցած և հոգիս լեցուած իրարու հակասող զգայնութիւններու զարմանալի խորհուրդով մը՝ հեշտանքի, ատելութեան, վայելքի ու անձկութեան, որոնց փոխն ի փոխ արագ և վաղանցուկ ազդեցութեան տակ կը սարսուայի և կամ կը տաքնայի յանկարծական տենդով մը:

[Յաջորդով]

ՋԱՊԷԼ ԵՍՍՍԵՅԱՆ

ՍԻՐՈՅ ԶԱՅՆԵՐ

Զօնուած՝ LENA MEYER-ին

Կը թօգուցի նուրբ գիծերով սպիտակ՝

Յայգը լուիկ մեր մեկնուոր հսկումին:

Երա՛գ, երա՛գ՝ քարքիչներուդ շուքին թակ:

Նրբի՛ն, դողդոջ երգեր կուգան հեռուէն:

Ա՛հ, ի՛նչ պիւրանք՝ կիսալոյսին մէջ միեակ՝

Հիւանդ սէրդ՝ այսպէս ճնշել հեօօրէն:

Լուսնին փարած վերն ամպերն են արծաթեայ.

Հեռուն ժպտող ծիրկաքի՛նն է ոսկեհա՛ււ՝

Որ քափանցիկ լայն ֆողին թակ կը դողա՛յ:

Մոռնա՛լ, մոռնա՛լ կեանքը ունայն թափօրէն,

Երազանքի մը մէջ սուզի՛լ երջանիկ,

Ձի կա՛ն ժամեր որ յաւիտեան մը կ'արժեն:

Ի՛նչ բան անցաւ իմ սիրտիս մէջ, սիրելի՛ս,

Որ չեմ կրնար սիրել կեանքը ուղի պէս...:

Մեկամաղձօս 'Բրա՛ջ մը պէս սիրէ գիւս:

Միայն Սիրոյ համար ծրեւած ուրե՛ր կան:

Յաւիտեանքնե՛ր, յաւիտեանքնե՛ր սիրելու

Իղձը չէ՞ որ մեզ կը թանկ գերեզման...:

ՀՐԱՆՑ ՆԱԶԱՐԵԱՆ

ԿԵՂՄԻՔԸ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՄԷՋ

Արդի գրական միտքերը զբաղեցնող խնդիրներէն մէկն ալ ապահովապէս կը թուի ըլլալ Արուեստին մէջ տիրող կեղծիքը: Այս մասին վերջերս հրատարակուած գիրքի մը վրայ երեւելի քննադատ էմիլ Ֆակէի գրածէն դատելով, կ'երեւայ ստուգուած ըլլալ սա իրողութիւնը թէ՛ Արուեստը՝ ըլլա՛յ իտէալական, ըլլա՛յ բնապաշտական կամ խորհրդապաշտական, չարունակական շինծուութիւն մը, արուեստականութիւն մըն է, զոր մարդիկ կը կարծեն սքօղել և չեն յաջողիր:

Այս ըսուածը իր իսկականութիւնը, իր նոր ըլլալու թովչութիւնը ունի անտարակոյս, բայց չդադրիր յանդուգն ու համարձակ վարկածի մը բնոյթը պարզելէ, ինչ որ դիտել կուտայ արդէն Ֆակէ: Ընկերաբանական նոր գեղեցկագիտութիւն մըն է ամբողջ այս խնդիրը, աւելի մօտեցող Սրէնսըրի արտայայտած սա գաղափարին թէ՛ Արուեստը խաղ մըն է, ինչպէս որ նկատուեր էր առաջները արդէն Շիլլէրի կողմէ:

Կարելի է կարգ մը պարագաներու մէջ որոնել Արուեստին կեղծ ձեւերը ու կերպերը: Երազանքը, օրինակի համար, արուեստ մըն է, որովհետեւ երբ մէկը ուզէ երազել, առանց մասնաւոր նիւթի մը, առարկայի մը վրայ մտածելու, պարտաւոր է ինքն իր մէջ սեղմուիլ, ամփոփուիլ և իր ներքին խորհուրդներովը սնանիլ միայն: Այսպէս ընելովը ուրեմն, ինքնաթելադրութեան մը (autosuggestion) ենթարկած կ'ըլլայ իր անձը: Երազանքը կը ստացուի նաև արհեստական միջոցներով, գրգռիչ հեղուկներով, ինչպէս ալքօլով, ծխախոտով, մօրֆինով և այլն: Հետեւաբար այս երկու միջոցները նպատակ ունեցած կ'ըլլան իրական կեանքը քողարկելու, անհետացնելու և անոր տեղ ծնելու, երեւակայելու շինծու աշխարհ մը: Այս պարագային մէջ է որ երազող մը, գինով մը, մօրֆինամով մը կրնան ենթադրուիլ իբր տեսակ մը արուեստագէտներ, որոնք կը նկրտին խոյս տալ, անջատուիլ պահ մը իրականութենէն եւ այսպէս ընելու համար կը մղուին կեղծիք մը ստեղծել, պատրանք մը չինել ինքզինքնուն:

Ողորմոյն ալ արուեստագէտ մըն, թէև վարնոց արուեստագէտ մը (un grossier artiste): Ի՞նչ է խաղամոլին ըրածը. բէժհ, կանանչ ծածկոցով սեղանին առջև, խաղաթուղթերու դէզին հանդէպ, խորհրդաւոր ու ճարտարանար հաշիւներու, խաբէական թուանշաններու համարանքի մը մղձաւանջին կենթարկէ իր միտքը, անակնկալներով, յոյսերով լեցուն խաբուսիկ աշխարհ մը ստեղծելու համար ինքզինքին և այս կեանքը կուտայ իրեն անանկ տարօրինակ հաճոյքներ, անդիմադրելի զգայութիւններ՝ զորս իր ամենօրեայ կեանքի ընթացքին մէջ չպիտի վայելեր երբեք: Ուրեմն արուեստագէտ մըն է խաղամոլն ալ, որ բախտաթուգ-

թերու պատրանքէն կը ջանայ պատրաիւր կեանք մը շինել ինքզինքին, իրականութիւնը ջնջելով: Սբէնաբրի ըսածը չէ՞ նորէն թէ «Արուեստը խաղ մըն է»: ասկայն այսօրուան ըմբռնումով կարելի է ըսել նաև թէ «Խաղը արուեստ մըն է»:

Ճամբորդը ո՛չ նուազ արուեստագէտ մըն է խաղամոլէն, երազամուտէն: Շոգենաւը ճամբայ չելած, աչքերը մեծ մեծ բացա՛յ է դիտելու, տեսնելու, բան մը չփախցնելու մարմաջէն, տենչախտէն բռնուած, եթէ չէ բռնուած արդէն ծովախտէն: Իր այս հոգեկան վիճակը արտասովոր և ծիծաղելի բան մը չունի թէև և կարելի չէ ըսել թէ ճամբորդը կ'երազէ, բայց կը տեսնէ, կը նշմարէ վայրեր, քաղաքներ և մարդեր, որոնք իրեն անծանօթ ըլլալով, կ'երևնան իր աչքին իբր իրականութենէ դուրս բաներ, տարբեր ձևերու մէջ ու տարբեր կերպերով, երազային ու գեղարուեստական աւարկանքերու պէս: Բասքալ՝ որ բոլոր հոգեկան գաղափարներուն գիտցած է թափանցել, գրած է. — «Երբ կը ճամբորդէ մարդ, կը կարծէ որ կ'երազէ»: Ուրեմն մարդ կը ճամբորդէ երազանքի զգացողութիւն մը հայթայթելու ինքզինքին, իր սովորական վիճակէն խոյս տալու և տարբեր տպաւորութիւններով ապրելու համար, թէև կեանքի ամէնէն իրական շարժումին մէջ, ցուցադրութեանը մէջ: Հետևաբար, ճամբորդն ալ, երազամոլին պէս, խաղամոլին պէս՝ կեղծիք մը կը դնէ իր սովորական կեանքի ընթացքին մէջ:

* * *

Հիմա, մէկ քանի աստիճան վեր արժէքով և ազնուութեամբ, բոլոր այն միւս արուեստներն ալ, որոնց մէջ կը մտնէ գեղեցկութիւն մը, կեղծիքներ են իրենց կարգին հաւասարապէս: Իտէալական արուեստը (l'art idéaliste) կ'ազնուականացնէ, կը մաքրէ մարդկութիւնը, կը բարձրացնէ զայն. ի՞նչ աղէկ. բայց ի՞նչպէս կ'ընէ. կեղծ աշխարհ մը, շինծու հորիզոն մը կը ներկայացնէ, կը պատկերացնէ մեր առջեւ, անով ճշմարիտէն խոյս տալու և պատրանքներու ցանկացող մեր հոգին գոհացնելու համար. կը հետեւի ուրեմն որ՝ տեսականութիւնը իրական կեանքը ջնջելով սուտ աշխարհի մը բոլոր դիւթանքները, բոլոր գեղեցկութիւնները մեզի ցուցնելու խարեւայ պաշտօնը կատարած կ'ըլլայ: Եւ երեւակայել որ՝ այս իտէալական արուեստն է որ կը կոչուի «մեծ արուեստ» (grand art), թերեւս սա պատճառին համար որ՝ անիկա հետզհետէ տեղը գրաւեց իրապաշտական արուեստին (l'art réaliste): Հելլէն թատրոնի անձերը բեմին վրայ նոյն իսկ Յոյներուն աչքին այնքան իտէալացած չէին նկատուեր, որքան կը նկատուին հիմա մտաւորական նոր մարդոց առջեւ, որովհետեւ որքան այդ տիպարները կը հիննան, անցեալին մէջ կ'անհետանան, այնքան աւելի կը հեռանան մտնէ և կը մտնեն «մեծ արուեստ» կոչուած չըջանակին մէջ: Ռասիսի դէմքերն

ալ նոյն կերպով կ'իտէալանան հիմա, թէեւ եղած ըլլան իրենց ժամանակին է՛ն իրական և իրապաշտ արուեստի յղացումները:

Նոյն կեղծիքը կայ խորհրդապաշտ (symboliste) և զգայնապաշտ (sentimentaliste) արուեստներուն մէջ: Առաջինը կամ ինչպէս երկրորդը, մեր հոգիները յուզելու, մեր սիրտերը խռովելու գեղեցիկ պաշտօնը կատարել կ'ուզեն, մոռնալով սակայն որ՝ իրական կեանքի մնջ, փողոցը շատ անգամ կարգ մը պատկերներ, հանդիպումներ կան՝ որոնք պիտի յուզէին արդէն մեր հոգին ու մեր սիրտը պիտի խռովէին: Յետոյ, այս երկու գպրոցի արուեստները, իրենց անունին կոչուածով, պէտքը կը զգան զգայնութեան, զթաշարժութեան, նոպայի և ցնորանքի կեղծ շարժառիթներ ստեղծելու, յերկրելու, շարժառիթներ՝ որոնց կեղծ ըլլալը գիտնալով փոխանակ մեզ խանդաղատելու, զգածելու, ընդհակառակը հաճոյք կուտան մեզի և Պուալօի ըսածին պէս կը զոչենք. — «Հաճելի՛ արգահատանք»:

Իսկ իրապաշտ արուեստը, օ՛հ, անիկա բոլովին կեղծիք մըն է, քանի որ Արուեստը չկրնար իրական ըլլալ արդէն բառին իսկական առումով: Իրապաշտ արուեստը կը նկրտի ներկայացնել դէմքեր, զորս կը կարծենք տեսած ըլլալ կեանքի մէջ, մեր շուրջը. բայց չենք յիշեր, չենք համոզուիր որ ճանչցած ըլլանք այն ճշդութեամբ, այն յստակութեամբ՝ որով կը ներկայանան մեզի: Ֆլօպէն՝ որ կատարեալ արուեստագէտ մը կը դաւանուի իրաւամբ իր «Մատամ Պօլառի» ու, կը ներկայացնէ մեզ անոր մէջ «Son importance M. Homais» (նորին կարեւորութիւն Պ. Հօմէ), որ անթերի, ամբողջական և իրական դէմք մըն է իրօք, բայց կարծել կ'ուզենք որ այնպէս է, կ'ուզենք որ այսպէս ըլլայ, քանի որ չենք տեսած, չենք ճանչցած զայն իրականութեան մէջ, հետեւաբար կեղծիքի մը, երեւակայուած դէմքի մը ետեւէն վազած կ'ըլլանք և թերեւ իրապաշտ արուեստն է միայն որ պիտի կրնար ամէնէն աւելի արուեստով ներկայացնել, պատկերացնել կեղծիքներուն է՛ն իրականը: Մէկ բառով, Արուեստը իր ամբողջական ձևերուն, փուլերուն մէջ կեղծիք մըն է, գեղեցիկ կեղծիք մը, եթէ կ'ուզէք, բայց կեղծիք մը վերջապէս, թէեւ իր բարոյական կամ բարոյացուցիչ արդիւնքներն ալ տուած ըլլայ երբեմն Տիքընսի, Ճօրճ Էլիըթի և Թօլսթօյի պէս գրողներու շնորհիւ:

* *

Բոլոր այս ըսուածներէն կարելի՞ է հետեցնել հիմա թէ՛ Արուեստը ինքնին անբարոյականութիւն մըն է, քանի որ կեղծիքը խորապէս, արմատապէս անբարոյականացուցիչ է՝ միշտ: Այս կնճռոտ ու դժուարին հարցը շատ մը իմաստասէրներու կողմէ հաստատական պատասխանի մը արժանացած է և կարգ մը լրջախոհ քննադատներ նոյն գաղափարին կը հետեւին: Արուեստը անբարոյական կրնայ ըլլալ, նոյն իսկ արուեստագէ-

տին միջոցով, ինչպէս վերը տեսնուեցաւ: Ֆլուպէս ախպար ներկայացուցին է այս կարգի արուեստագէտներուն. բայց ամէնքն ալ, ինչպէս Զօլա, Մօբսսան, Ալֆօնս Տօտէ և Կօնդուսներն ալ, քիչ ու շատ Ֆլուպէսի նմանած, անոր հետեւած են իրենց գրուածքներուն մէջ, նպատակ ունենալով ամէն ինչ Արուեստին նկատումներովը դիտել, տեսնել ու կշռել, իրականութենէն խոյս տալ, ամէն բան նկարել միտքի արտասովոր ու չափազանցուած թոխչերով, գրչի բիւրազան և անշօշափելի երանգներով, մինչև որ կեանքը, իրական կեանքը վերածուի անկերպարան, անբնական վիճակի մը՝ որ մասամբ պիտի խաթարէր արուեստագէտին հոգին, առաջնորդելով զայն անբարոյականութեան մը սահմաններուն:

Տարբեր տեսակէտով մը սակայն, կարելի է ընդունիլ թէ՛ Արուեստը ունի նաև իր բարոյական օգտակարութիւնը, վասնզի պէտք է ըսել թէ՛ արուեստագէտը իրական կեանքը փոխելով, անոր տեղ աւելի գեղեցիկ, աւելի հրապուրիչ կեանք մը ստեղծելու, ցուցնելու տեսչը ու բարի նպատակը ունի: Յետոյ, արուեստագէտը երբեք միտքէն չանցնէր իրական կեանքը ջնջել, վերցնել, այլ ջանք կ'ընէ խոյս տալ անկէ կրգածին չափ և ներկայացնել տարբեր կերպով բաղձացուած, երազուած կեանք մը: Այս ջանքը բարոյական արտայայտութիւն մը չունի թէև իր մէջ, բայց կեղծուած կեանքով, երևակայուած աշխարհով պիտի մղէր մարդկութիւնը որ հեռանայ իրական կեանքի գծում հաճոյքներէն և գոհնիլ հեշտանքներէն, որ աղնուանայ զգացումներով և գիտնայ արհամարհել ինչ որ բարձր չէ ու գեղեցիկ:

..

Մէկ խօսքով, ահա թէ ուր կարելի է յանգիլ այս կարգ մը խորհրդածութիւններէն ետքը: Արուեստը չբարեփոխեր կեանքը, Զեռարուեստին պէս, ոչինչ չսորվեցներ մեղի Գիտութեան չափով և ոչ ալ Կրօնքին ուժը ունի, մարդկութեան սովորական վիճակը բարւոքելու համար: Ստեղծուած կեղծիքի մը շնորհիւ, իրական կեանքը մոռցնելով, երևակայական տարբեր կեանքով մը շլացնել կը ձգտի մարդկութիւնը: Մենք, գիտնալով որ այդ կեանքը կեղծ է, կ'ապրինք պահ մը անով և կ'երևակայենք որ այդպէս պէտք է ըլլայ ան. ըսել է կ'ապրինք կեղծուած կեանքով մը, բարձր ու գերմարդկային կեանքով մը:

Ճշդապէս այս է եզրակացութիւնը Արուեստին հանդէպ եղած նկատումներուն: Արուեստագէտը մտաւորական գերմարդ մըն է (surhomme) և կ'ուզէ մարդիկը վերածել արուեստական, չինձու գերմարդկերու:

ՏՕՄԻՆՕ

Գ Ի Ն Ո՛Վ Ս Է Ր

Զօնաւած՝ Mile YANNI APELLԻՆ

Դուն Հրա՛ւոյն ես, դուն Երա՛զն ես, դուն Սէրն ես.
Տարաւարհի չհնաղ ծաղիկն ես աղւոր.
Միսքիական խնկումներով քունաւոր
Դուն մըտեղէն խնկեցընող տաճարն ես.
Դուն Հրա՛ւոյն ես, դուն Երա՛զն ես, դուն Սէրն ես:

Սեւ մագերովը սիրէ՛ զիս, զըզուէ՛ զիս,
Անոնց խորհուրդը պատմէ՛ ինձ աւաճնիս,
Որովհետեւ անոնք՝ հոգիս կապեցին,
Իրենց ցանցին մէջ կապեցին իմ հոգիս.
Սեւ մագերովը սիրէ՛ զիս, զըզուէ՛ զիս:

Թաց աչիւրը վրա՛ս յառէ՛ արժապէս,
Անոնց քո՛յնը ներարկէ՛ ինձ մեղմօրէն,
Որովհետեւ քու աչիւրը աղւոր են,
Խորհրդամոլ անտառներու շուրջին պէս.
Թաց աչիւրը վրա՛ս յառէ՛ արժապէս:

Տըղու մը պէս հանգչեցուր զիս կուրծքիդ վրայ,
Հանգչեցուր զիս, ու այսերս կրակէ՛
Դու ձիւնեղէն բազուկներուդ մէջ գրկէ,
Ու քոյ մարմինդ մարմնիս վրայ տարտայ
Տըղու մը պէս հանգչեցուր զիս կուրծքիդ վրայ:

Ահա օրքներս կարօտովը կ'այրին,
Ու կը լայննայ արտասուքի օխք մը խաւ
Իմ միաստուեւ քարքիչներու շուրջին շաւ.
Անոնց վրայ դուն ցօ՛ղը դիր համբոյրին,
Ահա օրքներս կարօտովը կ'այրին:

Բազուկները կը գալարուին, կը դառնան,
Տենչին կրակը նայումքը կը քովէ,
Որովհետեւ քու մութ հոգիդ գինով է,
Միախաւուր գիշերներուն պէս զարնան...:
Բազուկները կը գալարուին, կը դառնան:

Ժամն է, աղւո՛ր, երանութեան ժամն է աս.
Շրքներուս վրայ դիր օրքսնեցնէ՛րքը բոցէ,
Բռնցի՛ր կեանքը, աղւոր աչիւ՛րդ ալ գոցէ...:
Ի՛նչ, կ'արտասուե՛ս, ու յուզումդ կը դողա՛ս.
Ժամն է, աղւո՛ր, երանութեան ժամն է աս...:

ՌՌՌՌՌՌՌ ԶԻՆԻԼԿԻՐՈՒՄ

Հ Տ Պ Ի Տ Ը

ՄՍՍՍՄ որ վիպական սեռէն յաջող պատմութեան միայն հրատարակելու նշանաբանով կը շարժի իր ընթերցողները, հաճոյքով կը ներկայացնէ իր վիպասէր ընթերցողներուն հետեւեալ պատմութիւնը, որ հոգեբանական գեղեցիկ էջ մըն է, պատկերացում յաջող վրձինովը անուանի հեղինակին: — Խմբ. Ծան.

Երբ քաղաքապետարանին ժամացոյցը երեք ղարկաւ, Պր. Վէրնիէի նստարին պաշտօնեան գրասեղանին դարակները գոցեց, գրիչը տեղը դրաւ և գլուխը երկու ձեռքերուն մէջ առնելով, իր մշտատեւ տաղտուկի ժամերը չգլխաւ համար՝ հաճելի դադում մը փնտռեց:

Կիրակին, ամէն օրէ աւելի, կը ճնշէր սիրտին վրայ, որովհետեւ մինչեւ իրիկուն սովորական գործերով չէր զբաղեր. և իրեն տրուած աղատութիւնը իր ձանձրոյթը չէր մեղմացներ: Գլուխը վեր վերցուց և դուրս նայեցաւ: Աւանին բոլոր բնակչութիւնը խումբ խումբ կ'անցնէր սալաշատակին վրայէն, դէպի օծնավաճառը երթալով և աղաքը քրքշալիք խնդուքներ կ'արձակէին արեւին բոցեղ ճառագայթներուն տակ, երջանիկ մօտենալուն՝ սպասուած հաճոյքին, որ հեռուէն մեծաշփոխ փողերով կ'աւետուէր: Բոլոր այս մարդոց սիրտերը ուրախութենէ կը խայտային և երջանկութիւնը լրենց դէմքերը կը ծիրաներփնէր:

Նախանձեցաւ անոնց: Ինք միւս մինակ էր աշխարհիս վրայ, ոչ ոք ունէր իրեն ընկերացող: Մարդկութենէ դուրս արարած մը կը նկատէին զինքը, որովհետեւ ինք տգեղ, կարճահասակ, կուղ էր, և այդ պատճառով կը հետեւցնէին թէ սիրտ ալ չունէր: «Փաթոն»ը մեծ համարում ունէր վրան, հակառակ իր ակներեւ տձեւութեան, իր ուշիմութեանը տեղեակ ըլլալով: Բայց այսչափ: Միւսները անտարբերութեամբ կը վարուէին հետը. նոյն իսկ կը ծագրէին զինքը: Սակայն կը զգար որ հակամէտ էր խնդալու, զուարճանալու, սիրելու, ուրիշի մը պէս: Բայց մարդերուն անողոք չարութիւնը յուսահատական անդունդ մը կը բանար իր առջեւ և վերջապէս պէտք էր որ իր կեանքին ամբողջ տեւողութիւնը անցընէր այդ փոշիապատ աշխատութեան մէջ, թուանշաններու մէջ խորասուզուած, իբր ընկեր ունենալով մի միայն կանաչ լայնածաւալ խաւաքարտեր և դրոշմուած թուղթեր: Աշխարհիս վրայ մէկը չունէր, նոյն իսկ երիտասարդ բարեկամ մը: Միւս մինակ էր, իբր բարեկամ ունենալով սոսկ մէկ քանի գիրքեր, որոնք անզգալաբար անցընել տուած էին իր պարապ ժամերը: Եւ այդ գիրքերը երազել սորվեցուցած էին

իրեն, իր աչքերուն առջև պարզելով տեսականի և զգացումի նոր աշխարհ մը: Ընդվզումի թափեր առաւ: Իր մէջը մարած հպարտութիւնը ըմբոստացաւ այն ամէն նախապաշարունակներուն դէմ, որոնք զինքը պաշարած էին և մարդոց մէջ տարօրինակ և արտասովոր էակի մը վերածած: Ինքը զիտէր թէ տգեղ էր, կռնակը դուրս ցցուած, դէմքը ահռելիօրէն խոշոր և մազերը կարմիր, բայց գիտէր նաեւ՝ եւ ինքնավստան հպարտութեամբ մը տեղեակ էր թէ՝ իր իմացականութիւնը շատ մը ուրիշներինէն բարձր էր և թէ իր սիրտը, պէտք եղած ատեն կարող էր բաբախել միշտ ուրիշ մը սիրտին պէս: Ոչ ոք մինչեւ այդ ատեն իրեն ժպտած, ոչ ոք իր յուսահատական վայրկեաններուն մէջ ձեռք կարկառած էր: Յուսահատած չէր սակայն, և ապագան տարտամ մշուշի մը մէջէն իրեն կը ժպտէր, իր երիտասարդութեան մութ գիշերուն յաջորդող ծիրանփայլ արշալոյսին պէս:

— Ի՞նչ է ան, Պարոն Հանրթօն, կը քնանա՞ք:

Ճանչցաւ անմիջապէս Պր. Վէրնիէի սպասուհիին ձայնը: Երազանքէն սթափեցաւ յանկարծ, բարկացած յանկարծակիի գալուն և դրեթէ ամօթապարտ՝ իր խորհրդածութիւններուն մէջ կորսուած ըլլալուն համար:

— Դուրս չելա՞ք, Պր. Հանրթօն, ըսաւ ծեր սպասուհին:

Ոտքի ելաւ:

Պատահանը բաց էր, և արեւը հետզհետէ ներս կը խուժէր լուսաւորելով եւ շողացնելով աշխատութեան սենեակին ամբողջ առարկաները: Ծաղիկներու հնչուէտ բոյրերով բեռնաւորուած հովը ներս կը սպրդէր եւ անցորդներուն ձայները ապակիներուն վրայ կուգային կը փշուռէին: Հին, գոյնը նետած, մոխրագոյն վրանոցը հագաւ, գլխարկը դրաւ եւ դուրս ելաւ: Բազմութեան հետեւեցաւ առանց մտածելու: Ամբոխին մէջ կորսուեցաւ, ներքին ուրախութիւն մը զգաց, ինքզինքը մարդոց մէջ խառնուած տեսնելով, մարդիկ որոնք զինքը կը սանէին յորձանքի մը պէս և այդ հոսանքին մէջ իր տձեւութիւնը աննշմար կ'անցնէր: Դուրսը վեր վերցնելու կը վախնար, վստահ ըլլալով որ իր աչքերը պիտի հանդիպէին հեգնական ժպիտներու և սառուցիկ ակնարկներու: Տօնավաճառին վայրը հասաւ վերջապէս: Ահռելի եռուղեւում մը ամէն կողմ: Պոռհտուքներ, թմբուկներ, շաղակրատութիւններ օղը կը թնդացնէին, խլացուցիչ արձագանգ մը առաջ բերելով: Խեղկատաւներ բարձրաւանդակներու վրայէն կը ճողոմարանէին, կիներ ինքզինքնին կը ցուցադրէին ամէն կողմ, հսկայ մարդիկ պղինձէ խոշոր փողերով ժողովուրդին կ'աղղարարէին այն հրաշալի տեսարանները՝ որոնք պիտի պարզուէին իրենց աչքերուն առջև, ա'յնքան չնչին գումարով մը:

Ինչպէս ալիք մը ծովուն վրայ ուրիշ ալիքներէ կը մղուի, Պարոն Հանրթօն, կարճահասակ և նիհարակազմ, ամբոխին կողմէն հեռուները տնքուեցաւ: Անդգայաբար ինքզինքը յանկարծ դտնաւ Սիւրքին առջևը:

տօնաւաճառին ամէնէն աչքառու և ճոխ վայրը: Շողշողուն բառերով
խոչոր ազդարարութիւն մը գրաւած էր գրեթէ դրանը աջ կողմը.

ՕՐԻՈՐԳԱՆԱՆ

ՀԱՉԱԿԱՆՈՐ ԶԻԱՄԱՐՉՈՒՀԻՆ

ԻՐ ՓՈՐՁԵՐՈՒՆ ՄԷՋ

Ազդարարութիւնը աչքին դարկաւ անմիջապէս: Այդ ձիամարդունին
ամէն պարագայի մէջ գեղեցիկ ըլլալու էր, գեղանի աղջիկ մը՝ զոր
պիտի կարենար համարձակ դիտել, առանց անկէ արհամարհական նայ-
ուածք մը ընդունելու, ինչպէս սովոր էին ընել աւանին գեղեցիկ
օրիսրդները: Ներս մտաւ:

Սիւքին դուռը բացուելով՝ ձին երեւցաւ, իր սմբակներովը դուրե-
լով գետինը: Օր. Սիկալ անոր սանձերէն բռնած, սլացիկ, փափուկ իր
ամաղոնին մէջ, թամբին վրայ թեթեւօրէն նստած, կը թռչէր կարծես:
Խարաղանին ծայրովը օդին մէջ չրջանակներ կը յօրինէր, և երբ ձին
երկու ոտքերուն վրայ կը կանգնէր, պզտիկ թեթեւ հարուած մը կ'իջե-
ցնէր անոր ականջին: Յետոյ ոստում մը, և ահա Սիւքին մէջ առոյգ
ձիուն կնճռոտ փորձերը ի յայտ կը բերէր հանդիսատեսներու ապշած,
զարմացկոտ աչքերուն առջեւ: Շատ մը անգամներ Սիւքին չրջանը
ըրաւ, դրողելով և սիգապանձ ճախրելով իր ձիուն վրայ եւ զինքը
դիտող աչքերուն՝ իր փափկութեան և գեղեցկութեան բոլոր շնորհները
բաշխելով:

Պր. Հանըթօն կը վերանար այս տեսարանէն: Աչքերը անթարթ յա-
ռած էր ձիամարդունին վրայ, անոր հոգիին խորը թափանցել ուղեկով:
Իր մէջը նոր բան մը առաջ կուգար, — անհանգստութիւն մը՝ որուն
գաղափարը չունէր — և իր սիրտը լանջքին տակ, դարհուրելի հարուած-
ներով կը չարչարէր զինքը: Շնորհալի ձիամարդունին բարձր ոստումներ
կ'ընէր: Հանըթօն կը վախնար որ կ'իյնայ և ճակատին վրայ պազ
քրտինքի շիթեր կը մարդարտանային: Բայց ան թեթեւաշարժ էր եւ իր
օձադալար շարժուձեւերովը անշարժ կը կենար, իբր թէ կենդանիին
փակած ըլլար, ընութեան մէկ տարօրինակ քմահաճոյքովը, մէկ մար-
մինի վերածուած ձիուն հետ:

Տախտակները մէկդի առնուեցան, որպէս զի գետնի փոսերը մէջտեղ
ելլան, և ան՝ ոստումով մը անցաւ արագօրէն անոնց վրայէն, ժպիտ
մը գծելով իր բուստէ չրթունքներուն վրայ: Քանի՜ վտանգները կ'ա-
ւելնային, քանի՜ փորձերը կը կնճռոտէին, ա'յնքան վստահ կ'ըլլար
ինքզինքին: Չուաններէն կախուած կապիկներ իրենց միմոստկան գէմ-
քերը կը ցուցնէին ներկաներուն: Թութակները կը շատախօսէին
խաղոտ ձայնով մը, և ամփիթատրոնին մէջ, աւազին վրայ կազ հտպիտ
մը, կարմիր կեղծամով, ներկուած և ալիւրաթաթախ գէմքով, սրունք-
ները քանտուած խոչոր, լայն, ճերմակ, աչքառու տափատի մը մէջ,

անկապ, խելացնոր շարժուձեւեր կ'ընէր, աշխատելով խնդացնել
ամէնքն ալ, նոր և արտասովոր դէմքի ծամածռումով մը: Զեռքերուն
վրայ կը կանգնէր, ոտքերը օդին մէջ, դժուարին ոտու մներ կ'ընէր,
ուրախութեան աղաղակներ խլելով ամէն կողմէ: Երբեմն ոտքի վրայ
կը կենար, աչքերը թարթալիկով բերանաբաց եւ մարմինի այն տեսակ
աշուկի գալարումներ կ'ընէր, որ գեղեցիկ ձիամարդունին փառաբանող
ձեռքերը կը դադրէին վայրկեան մը, ծափահարելու համար այդ անձու-
նի խեղկատակը, որուն ահագին, ճերմակ տափառը կ'ուռէր հովէն:

ԷՏՄՕՆ ՓԻԼՕՆ

[Յաշորդով]

Թարգմ. Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

Գ Ա Ն Գ Ա Տ

Որքան անճնապատէ ու ետտէր ես,

Որքան մեացիր.

Ելեր կ'առնուիս իմ բերումներէս,

Հեքս չես խօսիր:

Կ'ուզես որ միայն ձայն մը ունենայ

Քնարս բազմալար,

Եւ իր եծծիւնը ջիւնը ու բիւրեղեայ,

Քեզի համար լար:

Կ'ե, իրաւ է որ շո'ս հակառական,

Նոյն իսկ ամբարից,

Պրիչէս ելած սիրերգներ շո'ս կան,—

Որո՞նք կ'իզձ են մից:

Ուխտքս կը մոռնամ երբեմն դիպումսով

Սրտեսիս համար,

Եւ քեզմէ շարքեր ներշնչումներով,

Թէեւ անյարմար,

Եր պղծեմ միտքիս մեր պերային

Կուտարիւնն ամբիծ.

Սակայն տկնարկներդ քո'ղ վերէն նային,

Մեղմ, անբաւար:

Սիրել չեմ ուզեր շուրջս ձանձուրքի

Վախ ծաղիկներ.

Համբար, գիտե՛ս, շու'ս մը կը գայրի,

Ա'լ չապրեցրներ:

Սյգը մէկ երանգ, երկինքը մէկ քայր

Ունի, սիրելի'ս.

Պուն անձիդ վրայ, —ամբողջ հրապար,—

Մէկ օնորհ ունիս:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐԱՄՈՒՆ

ՄԻԱՅՆ ՄԵՆԷ ՄՈՒՆՈՒՆԴ ԵՆՔ

Աւետարանի Գրդ Թիւով Վեր. Գրիգորեան կը յուզէ սա խնդիրը Թէ՛ Պէ՛տէ՛ Ե՛ որ Աւետ. Հայերը ուրոյն եկեղեցի կազմեն : Նպատակս Վեր. Գրիգորեանի յօդուածը քննադատել չէ՛, քանի որ ճշմարտութիւններ կան հոն. բայց պէտք է որ այս առիթով ցոյց տանք այն սխալ գաղափարները՝ զորս կազմած են իրեն հետ ուրիշ Հայ Բողոքականներ ալ : Բնաւ կասկած չկայ Թէ՛ Հայ Եկեղեցին առաքելական է, հակառակ ամէն այն թշնամական ոգւով զրուծիւններուն, որոնք երեւցած են զայն Գրիգոր Լուսաւորիչի միջոցաւ սկսուած ցոյց տալու համար : Արեւու չափ պայծառ ճշմարտութեան մը մասին կրկին խօսիլ աւելորդ է : չենք ուզեր մանաւանդ խօսիլ անոնց դէմ՝ որոնք համոզուիլ չեն ուզեր բնաւ ու նշանաւ խեց մը իսկ չեն փոխեր իրենց կարծեցեալ հմտութենէն ու քարացած բրածոյ կարծիքներէն : Հիմա ալ, ինչ որ զրեւ կը փորձեմ, հաւանականաբար ապուշ քմծիծաղով մը պիտի ողջունուի ամէն անոնցմէ, որոնք հոգեւորապէս փրկուածներու շրջանակը կը կազմեն և որոնք կը զգան Թէ Հոգին միայն իրենց ու իրենց եկեղեցիին մէջ կը բնակի և ո՛չ այլուր : Մենք մեր Եկեղեցիին դարաւոր պատմութիւնը սերտելով և ուսումնասիրելով, երբեմն գտած ենք մոլեռանդական ա՛յն տեսակ վարկածներ, ա՛յն տեսակ ըմբռնումներ, որոնք զլիսովին հակառակ են աւետարանական ըմբռնումներուն և որոնք մէջի զմէջ է փնտռելը աստուածային ներշնչող հոգի մը : Այս ճշմարտութիւնը լաւագոյն կերպով ըմբռնելու, հասկնալու և անոր խորը թափանցելու համար, պէտք է նկատողութեան առնել սա պարագան Թէ՛ Կրօնքը՝ աստուածային ծագումի մը դրոշմը ունենալով մէկտեղ, բարոյական դրութիւն մը ըլլալէ չդադրիր, որ միջավայրին համեմատ կերպարանք մը կ'առնէ ու կը շարժուի ժողովուրդին ու ամբոխին ըմբռնումին համեմատ : Հոգեւորականն ալ ամբոխի մաս կազմելէ չդադրիր և գոցէ հոգեւորականներու կազմած ամբոխը շատ աւելի անտանելի է ու անարկու, որքան չէ աշխարհիկ ամբոխը : Այնպէս որ, ինչպէս այս վերջինը իր հակացողութենէն միշտ բան մը կը դնէ իր նորստաց

գաղափարներուն մէջ, նոյնպէս կրօնաւորի հանգամանքով ներկայացողը կը դնէ հոն այն բանը՝ զոր ունի ինք և որ քարացած է և զոր յետոյ դարերը կը նուիրականացնեն անցեալի խորհրդաւոր քողին պատճառներովը ու այն պարծանքներովը, զորս միայն անցեալը կրնայ տալ : Այս իսկ պատճառով է որ, դարերու շինած սխալ գաղափարները, համագումները, վարդապետութիւնները, իրենց սխալականութեան մէջ տակաւին նուիրական բան մը ըլլալ կը Թուին ամէն անոնց, որոնք իրական ճշմարտութիւնը ըմբռնելու կարողութիւնը չունին ու գաղափարներու աշխարհին մէջ կոյրի մը ցուպով կը յառաջանան, անդունդներու մէջ զլտորելու հակամէտ ու գահալիժօրէն անկումէ անկում առաջնորդուելու երկիւղով լեցուած : Ժամանակը կ'իրագործէ այն ամէն կրօն, իրողութիւնները, զորս՝ զօրաւոր կամբեր ու խոշոր անհատականութիւններ չեն կրնար իրագործել : Փարառներու շրջաններուն մէջ քանի՛ քանի՛ անգամ Սուէզի պարանոցը բանալու փորձեր եղան և զիտութեան ա՛յնքան վարպետ չեղողներ չյաջողեցան իրականացնել, ի՛նչ որ ԺԺ. Դարուն մէջ Ֆէրտինան աը Լէսէփօս հանճարը իրականացուց : Դադափարներու մոսիս ալ միևնոյն բանը կ'ընենք ըսել : Միլիոն Դարու մէջ երեւոյց հանճարեղ մարդիկ հալածանքներու և բռնի խոստովանանքներու տակ սպաննեցին իրենց փայլուն հանճարին ու հսկայ տաղանդին լայն սառառնումները. բայց անոնք ի՛նչ որ իրենց լայն ուղեղներուն մէջ կրկնել փորձեցին, ժամանակը ուժացուց ու պողպաթեց : Այսօրուան գիտնականները՝ զերծ հաւատաքնական ատեանի մը արհաւիրտ սպառնալիքներէն, կը խորհին, կը գործեն, կը պարզեն բոլոր ա՛յն ճշմարտութիւնները, որոնք հաւածանքի մը տակ ծածկուիլ զտապարտուած էին, ճշմարտութիւններ, զորս աստուածային ամենագոր ուժ մը դարերու ծագումէն ի վեր հաստատած է, և որոնք Ս. Գրքի մը ըմբռնումներուն հակառակ երեւցած ըլլալուն համար, հագիւ Թէ ժամանակի ընթացքին մէջ երևան ելան ու պիտի ելլեն, ո՛րքան ալ որ Կրօնքը իր հասկացողութեան հակընդդմ նկատէ զանոնք, Դիտութիւն և ժամանակ այն զօրաւոր ազդակներն են, որոնց տիրապետութենէն ոչինչ զերծ կրնայ ըլլալ ու մարդկային

մոլեռանդութիւնը ոչինչ պիտի կարենայ ընել զանոնք կասեցնելու և ոչինչի մատենելու համար անոնց ուժը և հեղինակութիւնը : Այս մտածումով է որ կրնանք ըսել թէ՛ ժամանակը պիտի նուիրականացնէ բոլոր այն կրօնական զաղափարները, որոնք հայաժանքի կ'ենթարկուին այսօր և որոնք կը խօսուին, կը գրուին, կը քարոզուին նոյն այդ ժամանակին նուիրականացուցած զաղափարներուն դէմ : Եթէ զիստական փորձաւորութիւնը մեզ այս եզրակացութեան կը հասցնէ, կրնանք հետևելու ուրեմն թէ, կրօնական զաղափարները՝ որոնք գիտական ճշմարտութիւն ըլլալէ շատ հեռու են, միշտ ենթակայ են ժամանակին նոյն տպաւորիչ ազդեցութեան : Քրիստոնէութիւնը եթէ իր ծագման ստեն աշխարհի պարզ էր, ետքէն աւելի այլազան Կրօնքի մը երևոյթով ներկայացաւ և այսօր իսկ հնութեան, դարերու, մոլեռանդութեան կապանքները կը դնեն Եկեղեցիներու մէջ, որոնցմէ զերծ չէ՛ նոյն իսկ Բողոքականութիւնը, որ ինքզինքը աւետարանական կոչելու չափ յաւակնոտութեամբ մը կը սնապարծի : Եթէ զարեբը իրենց ոչ բարեբար ազդեցութիւնը ունեցած են նախ՝ նական Եկեղեցիին վրայ, այնպէս որ շատ բան հիւրընկալած է ան յետոյ, այդպէս ալ հինգ վեց դարերէ ի վեր Բողոքականութիւնը ժամանակին նոյն ոչ բարեբար ազդեցութեան տակ, զուցէ՛ շատ բան կորսնցուցած է այն պարզութենէն, զոր քարոզել փորձած են Լուստեր կամ Զուրիկը, Կալվին և ուրիշներ : Եթէ Քրիստոս անգամ մըն ալ զար մեր մէջ բնակելու, սարսկոյս չկայ թէ չպիտի ճանչնար այն Եկեղեցին, զոր հիմնել ուզեց ընդհանուր եղբայրութեան անունին տակ : Վասնզի քրիստոսայդ եղբայրութիւնը՝ որ երկնային շունչով մը օծուե էր իր սկզբնաւորութեան ստեն, ապևրասան ու մարդկային ընդվզող, ևսասէր ոգին եղծեց, խաժարեց ու սպաննեց այդ ոգին, որ բուն իսկ քրիստոնէութիւնը պիտի յատկանշէր : Այս այսպէս է թէ՛ Կաթոլիկ, թէ՛ Օրթոդոքս, թէ՛ Հայ Եկեղեցիներուն և թէ՛ Բողոքականութեան համար, և առանց չափազանցութեան :

Ուրեմն, Բողոքականները ինչո՞ւ համար մեզ կը մեղադրեն իբր մոլեռանդ, ինչո՞ւ համար մեր Եկեղեցին կը նկատեն իբր ոչ աւետարանական կամ ոչ քրիստոնէական : Եթէ մեր

Եկեղեցին և ուրիշները կը քննադատեն իբր աւանդամուկ, ինչո՞ւ համար արդեօք չեն ընդունիր թէ իրենք ալ այդ աւանդութեան զոհեցն են : Ինչո՞վ կրնան ապացուցանել անոնք թէ՛ Աւետարանները հարազատ են ու կը ներկայացնեն Յիսուսի կեանքը ու անոր քարոզութիւնները, երբ իրենց արհամարհած աւանդութեամբը միայն զիտենք թէ՛ Գողգոթայի զոհին մահէն 40—50 և աւելի տարիներ յետոյ գրուած են անոնք, և տակաւին ո՞րքան կէտեր կան, որոնց մասին միւլնոյն հարցումը ընել պիտի փորձուէինք, եթէ մէկիկ մէկիկ յիշել պէտք ըլլար զանոնք : Արդ, ի՞նչ բանով որ մեզ կ'ամբաստանեն անոնք, մենք ալ փոխադարձաբար շատ բանով կրնանք ամբաստանել զիրենք, և մեզի, մեր Եկեղեցիին յատուկ շատ մը Թերութիւններէ զերծ չեն իրենք : Եւ այսօր այս յայտարարութիւնը ընել ստիպուած եմ մանաւանդ անոր համար, որ փորձով կը տեսնեմ թէ՛ Բողոքական Եկեղեցին կարծուածին չափ մոլեռանդութենէ հեռու չէ՛ և Հայ Բողոքականութիւնը՝ հակառակ հազու 50—60 տարուան կեանք մը ունենալուն, աշխարհի մոլեռանդ է մանաւանդ զաւանդներու մէջ, որքան չէ՛ զուցէ մեր Եկեղեցին, հակառակ երկու հազար տարուան կեանք մը ունենալուն : Եւ արդեօք այս որոշ և յայտնի մոլեռանդութեան համար չէ՞ որ Հայ Բողոքականները և իրենց պատուիրիներէն շատեր հակառակ ու Թշնամական ոգով կը խօսին աշխարհի Եկեղեցիին դէմ, որմէ ամենաոչինչ պատճառներով բաժնուած են և որուն ոչ պատճառութիւնը գիտեն, ոչ վարդապետութիւնը կը ճանչնան և ոչ ալ անոր ներքին կազմակերպութեան մասին զաղափար մը ունին : Եւ ցաւալին աշխարհի մեր բողոքական եղբայրները կը խօսին, կը վիճաբանին երբեմն, և զրեթէ միշտ, տկար, ապկար քահանաներու և վարժապետներու հետ, որոնք նոյնքան տգէտ են Եկեղեցիին ներքին կեանքին մասին և յետոյ յաղթական յոխորտանքով մը կը ներկայանան, սնապարծութեամբ լեցուն՝ իբր թէ ճշմարտութիւն մը պաշտպանեմ ըլլալնուն համար : Մինչդեռ կ'արժէր ուսումնասիրութեան առարկայ ընել ամբողջ Հայ Եկեղեցիին դարաւոր կեանքը և յետոյ վճիռ արձակել : Եւ զարմանալի՞նք ո՞րն է, առհասարակ Բողոքականներուն մեր տշքին սուղ և դաժը հաւատքակ

ԷՋ ՄԸ ԵՐՐԱՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ ԵՍՍԵՆՍԱՆՆԵՐԸ

Բ.

Տեղիք են, որոնք ո՛չ մատ մը առաջ գալիս են և ո՛չ ետ, բաներ մը, առարկութիւններ մը, որոնք միշտ եղած են ու կ'ըլլան շարունակ : Եւ սակայն, քանի որ մենք կը ճանչնանք մեր Եկեղեցին ա՛յնչափ՝ որչափ չեն ճանչնար մեր Բողոքականները, քանի որ մենք կը ճանչնանք Բողոքականութիւնը ա՛յնչափ, որչափ ան չճանչնար իր ամբաստանած, դատաւարտած Եկեղեցին, ուրեմն համարձակօրէն կրնանք ըսել թէ՛ Հայ. Եկեղեցին ա՛յնքան ազատամիտ է իր ինքնութեան մէջ՝ որքան չէ՛ Բողոքականութիւնը, այնքան ընդունակ է բարեփոխուելու, բարեկարգուելու, որքան չէ՛ Բողոքականութիւնը : Եւ ուշադրութեան անելիք պարագայ մըն ալ եթէ կայ, սա է որ, ներկայ ժամանակի ամէնէն ազատամիտ Բողոքականները ի՛նչպէս որ ըմբռնել կ'օգտեն քրիստոնէական հրամանակալոց վարդապետութիւնները (dogme), նոյնպէս են Հայ Եկեղեցականները և քիչ չեն բոլոր այն ճշմարիտ գիտնականները և քննադատները, որոնք Բողոքականութեան ժաղամը կը վերացնեն մինչև Հայ ազնադատներու՝ Թոնդրակեցիներու, որոնք Թ. և Ժ. Դարերուն մէջ ապրեցան ու իրենց ժամանակին տեսակ մը «Բողոքական»ները եղան Արդեօք ասո՛նք ալ, այս իրողութիւններէն ալ ըմբիծաղով մը պիտի ընդունուին անո՛նց կողմէ, որոնք մեզ բողոքովին մոլեռանդ և նախապաշարեալ կը նկատեն :

Ստորոգ թէ, ես մօտաւորապէս ետք տարիներէ ի վեր կրօնական հալածանքի մը ենթակա եղած եմ, մոլեռանդութեանց դէմ գրելուս համար, բայց եթէ ճշմարիտը կ'օգտեն, աս է որ՝ մեր Եկեղեցականութիւնը կամ մեր հասարակութիւնը մոլեռանդ չէ՛, այնչափ՝ որքան կը կարծուի որ է. պաշտօնական մարմիններուն ըսելիք չկայ, որոնք երեւոյթները փրկելու (sauver les apparences) համար նախանձախնդիր ոգիի մը բովանդակ՝ միջոցներով կը ներկայանան մեզ, սակայն ո՛րքան ներու հանդիպած եմ, որոնք իրենց տղիտութեան մէջ ա՛յնքան ընդունակ են ճշմարտութիւն մը ընդունելու և ա՛յնքան ազատամիտ են, որքան չեն Թերևս Աւետարաններով սնուցնուող պատուելիներ ու հոգևոր երգերու սնունդով սնած բողոքական եղբայրներ : Ասոնք կրնան վստահ ըլլալ թէ՛ մենք կարծուածին չափ մոլեռանդ չենք և մոլեռանդ չէ՛ մեր Եկեղեցին, որ առհասարակ հոգևոր փրկութիւն կը խոստանայ նոյն իսկ ամէն անոնց, որոնք Թ. պէտ փարսխէն հեռու կը գտնուին, բայց կ'ապրին հոգևոր-բարոյական կեանք մը ու կը ներկայանան ճշմարիտ քրիստոնէայի մը բոլոր գովելի յատկութիւններով, որոնք կրնան յատկանշել բուն իսկ մարդը :

ԿՈՐԻՆԷ ՎԱՐԳԱՊԵՏ

Այս կազմակերպութիւնը կրօնական թէ փիլիսոփայական, հրէական տարրին մէկ արտասովոր երևոյթը եղած է և չենք կրնար պատշաճեցնել ո՛չ Հնդկաստանի Եփեսոսներուն, ո՛չ ալ Աղեքսանդրեան Դպրոցէն՝ Դիցահմաններուն, ո՛չ ալ Պիժագորեան լուսէր և հայեցողական կեանքի սիրահար խորհրդապաշտ փիլիսոփաներուն, թէեւ պատմարաններէն ոմանք, մէկէ աւելի որոշ և մեկին հանգիտութիւններ և բացորոշ աղերսներ տեսնելով եզրակացուցած են թէ՛ այս աղանդը հետևած է է Պիժագորեան փիլիսոփայութեան : Արդէն այս փիլիսոփայութեան ցոլքերը կ'ընդլնարուին իրենց կեանքի իւրաքանչիւր դրուագներուն, սովորութիւններուն, լուսէր բնութեան և զգայամեղկ հաճոյքներէ՝ խորշումին և իրենց անսեռնեթ պարզութեան մէջ : Շահեկանութենէ զուրկ չպիտի ըլլայ ուսումնասիրել այս կազմակերպութեան օրէնքները և սովորութիւնները, զորս կը պատմեն Յովսէփոս պատմագիրը, Փիլոն Եփրայեցին և P. Didonի երկու հատոր ստուար Jésus-Christ անուն երկասիրութիւնը :

Այս աղանդը երևան ելաւ առաջին անգամ Արիստոբոզոսի ժամանակ, Ք.ս.է դար մը առաջ, և 70 թուականին, Նրուսաղէմի տաճարին կործանմանը ատեն անհետացաւ և անյայտացաւ : Եստենացիները, ընդհանրապէս Մեռեալ Ծովուն ափունքը, Յորդանան գետին եզերքը կ'ապրէին Ինտրայի ներհայեցողութեան մէջ ամփոփուած, ճշմարտական խոստամբերութեան մէջ չարչրկուած : Այս փիլիսոփայական բաժանումին անդամները իրարու հետ շղթայօրէն ազուցուած եղբայրներ էին : Իրենց ինչքը, ստացուածքը հասարակաց էր և իրարու պէտքերը կը լրացնէին. այս խումբին մէջ կը տիրէր ընդհանուր համբարշխութիւն մը : Այս ոգւով վառուած՝ օտարներու հետ ցուրտ արհամարհանքով կը վերաբերուէին և կը խորշէին անոնց հետ որ և է յարաբերութիւն հաս-

տատելի, մինչև իսկ օտարացած քաղաքները չէին ուզեր յաճախել. իրենց տուններուն Դրան. դիները անդրիներով (պատկերներով) դրուագ ուած էին : Յունական և Հռոմէական դրամներ ալ գործածելէ կը զգուշանային : Ո՛չ միայն Հրէական տարրէն զուրս օտարներէն խոյս կուտային, այլ նաև Փարիսեցիներն ալ կը քամահրէին, նկատելով զանոնք Թոյլ, մեղկ, կեղծաւորութեան մէջ նորացած, ձևակերպութիւններու մէջ շլացած : Սենտրիոնի անդամներուն նկատմամբ ալ նոյն վերաբերումը կը տածէին : Այս միտքանութիւնը հրաժարած էր բոլորովին աշխարհիկ հասկացմանէն և հեշտախտի տոհմներէն : Ամուսնական կեանքէն աւելի սիրելի եղած էր Ամուրիութիւնը, որով կ'ուզէին սանձել կիրքը՝ որ իրենց վրայ չտիրապետէ : Այս պատճառով կ'արհամարհէին ամուսնութիւնը, կ'ինքնուր Վրայ վստահութիւն չունենալով և զանոնք անմարդու նկատելով : Սակայն կ'ընդունէին որդեգիրներ՝ այն տարիքին մէջ՝ որ իրենց հրահանգները ընդունելու կարող ըլլային և զանոնք կը կրթէին, կը դաստիարակէին և զորովալիք ազապատանքով կը խնամէին, իբր իրենց սիրասուն հարազատը : Գրոնական այս բաժանումը զրկապիծոյ փարած էր երեք բաներու, որոնք են Աստուծոյ սէրը, առաքինութեան սէրը, ընկերի սէրը : Աստուծոյ նկատմամբ ունենած իրենց սէրը անհուն էր. Ենովան եղած էր իրենց զօրաւիգը, յոյսը, մխիթարութիւնը և իրենց կարողութիւններուն բոլոր Թափովը կը դիմէին Անոր : Անոր ըզձախտով վառուած, խանդազեղ յափշտակութեան մէջ զմայլած, կը մատուցանէին աղօթքով իրենց սիրտին վառ ըզձանքները և տենչանքները. կ'աղօթէին զրեթէ ամէն ժամանակ՝ լուին հայեցողութեան մէջ ամփոփուած, կ'աղօթէին Արեւածագին, կ'աղօթէին մարքուելով, սրբուելով. ասոր համար միշտ լուացումներ կը կատարէին. իրենց այս ընթացքը ծաղր ու ծանակ ըրած են Փարիսեցիները՝ կոչելով *hémérôbaphistes* :

[Տարգմտում]

ԴԱՆԻԷԼ ՆՇԱՆԵԱՆ

«ՄԱՍԻՍԻ ԱԼՊՈՍԵ

բաժանորդագրութեան հետ իբր ձրի նուէր ստանալու պայմանաժամը լրացած ըլլալով, և միւս կողմէ մեծ խնդրանք ըլլալով զայն բացառիկ վճարումով զնելու, գոհացում տալու համար ոչ բաժանորդներէ և ուրիշներէ եղած խնդրանքներուն, պէտք կը տեսնենք նաև զայն ձեռքէ վաճառելու, չգրկելու համապարկ զեղարուեստասէրները՝ Մասիսի Ալպօմը ունենալու իրենց հասոյքէն : Կը ծանուցանենք հետևաբար որ՝ զայն կրնան ստա՞նալ **ԿԱՐԵՍԻԿ** վճարելով անոր փոխարժէքը 20 ղըշ, Թղթատարի ծախքով 22 :

ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

ԹԱՎՇԱՆՆԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Հանգուցեալ Յովհաննէս էֆ. Թավշաննեան իր կենդանութեանը Կտակ մը պատրաստած է եղեր, պաշտօնապէս վաւերացուած Նիւ-Եօքի նօտարութեան կողմէ, Կտակակատար կարգելով իր երկու բեռայրները՝ Դրիգոր էֆ. Ալեա. Նաքեան և Տօթ. Թիրեաքեան Խան Յիշեալ նօտարութիւնը սպահովագրուած նամակներով ծանուցած է երկու Կտակակատարներուն, որ. պէս զի առաջիկայ հոկտեմբեր ամսուան մէջ, որոշուած օրին, անձամբ ներկայ գտնուին Նիւ-Եօք, Թավշաննեան Կտակին բացուելուն, հսկելու համար անոր տրամադրութիւններուն զօրծարութեանը : Առանց այս ձևակերպութեան, Կտակը չպիտի կրնայ բացուիլ :

ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ

Իզմիրի առաջնորդ և մեր Սրբազան աշխատակիցը՝ Տ. Եղիշէ Եպիսկ. Դուրեան, որ օղափոխութեամբ Պոլիս կը գտնուէր քանի մը շաբաթէ ի վեր, հինգշաբթի օր Մէսածըրի շոգենաւով մեկնեցաւ իր պաշտօնատեղին : Իր մեկուսին ողբերթի փութացած էին Սրբազանի բարեկամներէն և համակողմներէն մեծ թիւ մը :

★ Մեր շնորհակալութիւնները մեր պաշտօնակիցներէն **Արեւելեան Մամուլի, Աւետարեւի, Լոյսի և Համագիտակի.** որոնք՝ համակիր տողերով ծանուցած էին Մասիսի վերաբացումը : Մասնաւորապէս **Համագիտակի**՝ որ խիստ համակրական արտայայտութեամբ մը կ'ողջունէր Մասիսի վերաբացումը՝ մասնաւոր շնորհակալութիւն :

ԳԻՐԳԵՐՈՒ ՊԱՅԳԱՐԸ ԱԶԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ

— 333 —

Մ. Հիւկ Լըռու, Մաքենի մէջ այս հարցը կը քննէ: Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, Պելճիքա, Դանիա, Միացեալ Նահանգները, Ֆրանսա, Մեծն Բրիտանիա, Հոլանտա, Իտալիա, Նորվեկիա և Զուիցերիա միացած — 314 միլիոն ժողովուրդ — ամէն տարի կ'արտադրեն 80,000է աւելի նոր երկասիրութիւններ, հետեւաբար մէկ գիրք՝ 3920 բնակիչի վրայ: Բայց արտադրութեան այս գործունէութիւնը կը փոխուի երկիրէ երկիր: Զուիցերիա բեզմնաւորութեան մրցանակը կ'առնէ: 448 Զուիցերիացիներուն վրայ հաս մը կայ՝ որ ամէն տարի կը նստի սեղանի մը առջեւ, կը գրէ գիրք մը և կը հրատարակէ: Նաքը կուգայ Հոլանտա, որ 1600 հոգիի համար տարեկան մէկ գիրք կը հրատարակէ, Դանիա՝ 1618 հոգիի համար մէկ, Գերմանիա՝ 2085 հոգիի, Պելճիքա՝ 2700ի, Նորվեկիա՝ 3146ի, Ֆրանսա՝ (ո՛վ կը կարծէր որ Ֆրանսա ա՛յսչափ ետքը կուգայ) 318ի, Մեծն Բրիտանիա՝ 4642ի, Իտալիա՝ 5320ի, Միացեալ Նահանգները՝ 10171ի, Աւստրիա-Հունգարիա՝ 20454 հոգիի համար մէկ գիրք տարեկան: Սպանիա ցանկին մէջ չկրեաւր անգամ, մինչ ուրիշ պզտիկ աէրութիւններ ինքնավստահ կը ցուցնեն ինքզինքնին: Անգլիէն լեզուով (Մեծն Բրիտանիա, Միացեալ Նահանգ, Անգլիական գաղթականութիւններ) գիրքերու հրապարակին կարեւորութիւնը իրողութիւն մըն է, պէտք է ընդունիլ ասիկա: Բայց շահելու կոմ կորսնցնելու պայքարը կը պահպանէ իր գոյութիւնը Ֆրանսայի և Գերմանիոյ միջեւ: Գերմանիոյ 27,606 նոր հրատարակութեանց դէմ՝ Ֆրանսա տարեկան 12,264ի առաւելութիւն մը ունի հիմա:

ՄԱՆՁՈՒՄԷ Միակ առտուան Հայաթերթը, կը հրատարակուի արաբի և շալոյսին, և առտուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հեռագիրներ, քաղաքական, ներքին, երկրեցական ու կրթական լուրեր, գրական, անտեսական և ընկերային յօդուածներ: Զօրեքշարթի և շարաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու: Դինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դրշ. գաւառ՝ 108, արտասահման՝ 25 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, գաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Թ. Էֆ. Գայսէրեանի հասցէին՝ 38, Պասլը Ալի Ճատտէսի:

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ Աղգային, գրական և քաղաքական Հայաթերթը, հրապարակ կ'ելլէ կէսօրին, ինամուած բովանդակութեամբ, ցորեկուան հեռագիրներով, թարմ լուրերով և քաղաքական ու տնտեսական հմտալից յօդուածներով: Ետքաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջին մէջ պարունակելով գրական, կրթական ու գիտական յօդուածներ: Դինն է 10 փարա, շաբաթ օրերը 20 փարա: Տարեկան բաժանորդագինն է Պոլիս՝ 100 դրշ., գաւառ՝ 120, արտասահման՝ 40 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս 50 դրշ., գաւառ՝ 60, արտասահման՝ 20 ֆր.: Ամէն գրութիւն պէտք է ուղղել Տէր և Տնօրէն՝ Բիւլանդ Էֆ. Բէլեանի հասցէին, Պալիս, Սուլթան Համամ:

ՊԱ.Լ.ՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵՄԼ ԱՊՈՂՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերապահովագրական

Դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱ.Լ.ՔԱՆ Ընկերությունը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամեն տեսակ կաճ կորստի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրաժատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օգտուած է. կր կատարէ խաւն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇՈՎ ՈՒՆՃԵԱՆ
ալաքիա. Տեօյէ Օրիէնդ Պաքի կից, Սնատոն խան. (2)



Կը գանուի բոլոր
գեղազորներուն քով:


Թուրքիոյ ներկայա-
ցւոյիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱՅԱՐ

Հայունեաց Վարժարանի նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկններ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամբա հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները, ինչպէս նաև բնական, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և ձեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 Օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է հաաուցանել տարեշրջանին սկիզբը և կէսը Մնունդի արձակուրդին: Դաշնակի և երգեհոնի համար կը պահանջուի 5, 3 և 2 1/2 Օսմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 11ին (Ն. Տ.), Դ. իրիկունը: Աւելի տեղկութեանց համար խնդրել վարժարանին Յայտագիրը կամ դիմել Մր. Բիթի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, Ատեհնապետ իմամականութեան Ատաբաղար:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զուրկեցնելու համար, մասնագիտօրէն պատրաստուած և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր գաղիական փստերը: Այս վերջին փստերը՝ առանց ստամոքսի խանգարման և նոյրագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չորեքշաբթի օրերը միայն ձրի: (8—10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Զեռֆրոսֆուոսֆի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ԿՊՇԱՐԹԱ ԱՆԻ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԿԱԼԱԹԱ

ԲԵՐԱ

ՊՈԼԻՍ

ՍԵՐԻՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մաշէի դէմ, 343 և 343.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ,
1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.
1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.
- Չարչը Պօլու, Թ. 120.
- Գասերը եւ նորոգութիւնները ձրի.

կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաձեռքեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան

60 չրշ :

Արտասահմանի

14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգեւները ,
միշտ ձրիաբար , Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Զհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ»-ի Հասցէին

Գուրեուլու խան, քիւ 7, Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

در علم غلطه قورشونلی خاندانہ نومرو ۷ «ماسیسی» غزنمسی اداره خانه

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata.
CONSTANTINOPLE

ՌՕՊԷՐԹ ԳՕԼԷՃ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ եղած են վաճառականա-
կան ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վար-
ժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան , մարմնա-
մարզներուն և խաղերուն , ինչպէս նաեւ վարժարանիս ընդհանուր առող-
ջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարզի նոր և գեղեցիկ շէնք
մը կառուցուած է նորոգապէս , իր մէջ ունենալով մարմնամարզի ամէն
տեսակ գործիքներ , վերջին դրութեանց համաձայն :

ԲՍՑԱՌԻԿ ԱՌԻԹ ՄԸ ԴՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ. — ԶԱՐԴԱՐԵԱՆ ԴՐԱՏՈՒ-
ՆԷՆ. ՄԻԱՅՆ 20 ԴՐՈՒՇ ՓՈԽԱՆ 60 ԴՐՈՒՇԻ : — 1. Ասորա. վէպ. Բ.
Սիլվա. Թրգ. Թէրզեան 10 : 2. Ասրիկն. վիպերգ. Բաղասարեան 10 :
3. Առողջապահութիւն. Տքթ. Փէշտիմալճեան 2 1/2 : 4. «Ներշնչմունք» .
Տ. Սէթեան 5 : 5. Դիւրուսոյց Մեքոս Անգլ. Բերականոքեան. Ասա-
տուրեան 15 : 6-7. Ամուսնական Խնդիրներ. 2 հատոր 2 1/2 : 8. Սփռ-
փանկ Ռաւկիկն. Մ. Յովհաննէսեան 9 : 9. Ուղեցոյց Դրագիտութեան
Թուրքիկն Լեզուի. Գալպճեան : 10. Պիսալոցցի. Լինհարտ Գեր-
արուղ 5 : Այս 10 կտոր վիպական , առողջապահական , գրական , լեզ-
ուաբանական , բանաստեղծական և մանկավարժական գրքերը՝ որոնք 60
գրուշ արժէք ունին , 20 գրուշի կը ծախուին Զարդարեան Եղբայրներուն
Դրատունէն՝ Բերա , Դուլէ-Դարու թիւ 695 : Դաւառներու համար 7
գրուշ աւելի : Դրատուններ պէտք է փոխան օգտուիլ այս առիթէն , գի-
մելով վերելի հասցէին , ուր կը ծախուին նաեւ ամէն տեսակ թուրքե-
րէն , հայերէն և ֆրանսերէն նոր թէ գործածուած գիրքեր , աժան և
գիրքամատչելի գլիներով :